ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՀԱԿՈԲՅԱՆ Գ. Լ.

Շուրջ հինգ տարի է, ինչ սիրիահայերը Սիրիայում տիրող հակասությունների հետևանքով լքել են երկիրը, և նրանց զգալի մասը տեղափոխվել է Հայաստան[1]: Ներգաղթյալներին ընդունելու հետ կապված հարցերը սկզբից չունեին կարգավորման հստակ մեխանիզմ, չկար միասնական և ամբողջական ռազմավարություն, որը կապահովեր պետական աջակցություն՝ սկսած տնտեսական, սոցիալական, ֆինանսական աջակցությունից մինչև կազմակերպչական և քաղաքացիության շնորհման հարցերը: Այսօր դրանք կարծես կարգավորվել են, սակայն դա հարցի վերջնական լուծում չէ: Սիրիահայերն այսօր հայ իրականությանը և՛ սոցիալապես, և՛ մշակութային առումով հարմարվելու լուրջ խնդիր ունեն:

Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի ընթացքը դժվարացնող գործոնները բազմաթիվ են, սակայն սույն հոդվածի շրջանակում կանգ կառնենք սիրիահայերի հաղորդակցության հիմնախնդիրների վրա:

Գաղտնիք չէ, որ մարդիկ և մշակույթները չեն կարող լիարժեք գոյություն ունենալ՝ մեկուսացված այլ մարդկանցից և մշակույթներից: Եթե խոսում ենք մշակույթների փոխազդեցության մասին, ապա խոսքը մարդկանց մեծ խմբերի միջև շփման մասին է: Ըստ էության, հենց իրենք էլ ներկայացնում են միջմշակութային հաղորդակցության ընթացքը: Միջմշակութային հաղորդակցությունը կամ միջմշակութային ինտերակցիան գիտական շրջանառության մեջ են դրել Գ. Տրեյգերն ու Է. Հոլը իրենց "Մշակույթ և հա-ղորդակցություն. վերլուծության մոդել" աշխատության մեջ՝ այն սահմանելով որպես իդեալական նպատակ, որին պետք է ձգտի յուրաքանչյուր մարդ՝ հնարավորինս լավ և արդյունավետ հարմարվելով միջավայրին[2]:

Մեկ այլ սահմանմամբ՝ միջմշակութային հաղորդակցումը որևէ մշակույթում ստեղծված ուղերձի փոխանցումն է մեկ այլ մշակույթի[3]: Սովորաբար սեփական մշակութային նորմերի գի-տակցումը տեղի է ունենում այլ մարդկանց հետ շփման

---

[1] *Ըստ ՀՀ Սփյուռքի նախարարության տվյալների՝ 2014 թ. փետրվարի դրութ-յամբ Հայաստանում բնակվում է շուրջ 11.000 սիրիահայ, մոտ 2.800 ընտանիք: Սիրիահայերի ճնշող մեծամասնությունը բնակվում է Երևանում, շուրջ 500 հոգի՝ Հայաստանի տարբեր մարզերում, մասնավորապես Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի մարզերում: Այժմ տեղեկատվական դաշտում շրջանառվում է 22 000 թիվը: https://armenpress.am/arm/news/895509/-22000-syrian-ar-menians-re-locate-to-armenia-since-beginning-of-syrian-war.html, 23.06.2017,ժամը՝15:58: Էթնոսոցիոլոգիական հետազոտությունն իրականացվել է քանակական և որակական մեթոդաբանությամբ՝ կիսաստանդարտացված և խորին հարցազրույցներ սիրիահայ ընտանիքների շրջանում՝ Երևանում և մարզերում, ինչպես նաև փորձագիտական հարցազրույցներ սիրիահայերի խնդիրներով զբաղվող պետական և հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ:*

[2] **Trager G., Hall E.** *Culture as Communication: A Model and Analysis, New York, 1954, p. 37.*

[3] **Գևորգյան Կ.** *և ուրիշներ, Գործարար հաղորդակցում, մեթոդական ուղեցույց, Ե., 2005, էջ 124:*

ժամանակ, որոնք իրենց վարքում ղեկավարվում են այլ նորմերով: Լեզվի, հասարակական վարքի նորմերի և շատ այլ տարբերությունների պատճառով տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջև հաղորդակցումն առավել բարդանում է, իսկ երբեմն դառնում անհնար:

Ամերիկացի սոցիոլոգ Բարնան առանձնացրել է արդյունավետ միջմշակութային հաղորդակցության հետևյալ խոչընդոտները.

1. Նմանությունների ընդունում. միջմշակութային հաղորդակցման ժամանակ միմյանց չհասկանալու պատճառներից մեկն այն է, որ մարդիկ կարծում են, թե բոլորը նման են իրենց:

2. Լեզվական տարբերություններ:

3. Ոչ խոսքային վարքի սխալ մեկնաբանություն:

4. Նախապաշարմունքներ և կարծրատիպեր, որոնք ազդում են մարդկանց ընկալումների և հարաբերությունների վրա:

5. Գնահատելու ձգտում. արժեքային համակարգի տարբերությունները կարող են բացասական գնահատականների տեղիք տալ, որոնք արգելք կդառնան արդյունավետ հաղորդակցմանը:

6. Տագնապալից և լարված իրավիճակներ, որոնք միջմշակութային հաղորդակցման ժամանակ կարող են առաջացնել հակագործառութային վարքի դրսևորումներ[4]:

Մշակույթների և նրանց գործունեության արդյունքների փոխանակումը տեղի է ունենում միջանձնային շփման միջոցով՝ առօրյայում, ընտանիքում, պաշտոնական և ոչ պաշտոնական հաղորդակցման ժամանակ և այլն: Ցանկացած շփում, այդ թվում՝ անձնականը, ունի երեք տեսանկյուն՝ գիտակցական, զգացական և վարքային:

Այժմ ներկայացնենք, թե ինչ առանձնահատկություններ ունի հաղորդակցումը Հայաստանում բնակվող սիրիահայերի շրջանում: Վերլուծությունը ներկայացված է ըստ հաղորդակցության սուբյեկտների՝ առանձնացնելով հետևյալ տեսակները. ներհամայնքային և միջհամայնքային (սիրիահայեր և հայաստանցի հայեր):

Նոր մշակութային միջավայրին հնարավորինս շուտ հարմարվելու համար, անշուշտ, կարևոր են հաճախակի շփումները տեղի բնակիչների հետ, իսկ սեփական համայնքի ներսում շփման ձևերը վկայում են նրանց՝ տեղի միջավայրին հարմարվելու առկա վիճակի մասին: Բնականաբար, ինչքան շատ են շփումները սեփական հա-մայնքի ներկայացուցիչների հետ, այնքան դրանք բացակայում են տեղի հայերի հետ, հետևաբար, այնքան թույլ է արտահայտված հարմարումը հայաստանյան իրականությանը և մշակույթին:

Շփման առավել մտերմիկ ձևը այցելություններն են միմյանց տներ, որոնց ընթացքում մեծ հնարավորություններ են ստեղծվում մշակույթի առանձին տարրեր ճանաչելու և ընդունելու համար՝ տոնածիսական համակարգ, սնունդ, ընտանեկան ավանդույթներ ու սովորություններ, արժեքներ և այլն:

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ հարցմանը մասնակցած սիրիահայերի մեծ մասը՝ 63.4%-ը, հյուրընկալվում է Սիրիայից եկած իրենց

[4] Barna L.M. *Stumbling Blocks in Intercultural Communication, Belmont, CA, 1991, p. 370-379.*

հարազատների, ազգականների և ընկերների մոտ: Ընդ որում, իգական սեռի ներկայացուցիչների մոտ այն առավել արտահայտված է (8.6%-ով ավելի), քանզի նրանք ավելի քիչ են զբաղված աշխատանքային գործունեության մեջ, հետևաբար, ավելի շատ ազատ ժամանակ ունեն սիրիահայ համայնքի ներսում այցելությունների համար: Տեղի հայերին հյուրընկալվելու պարա-գայում ունենք հետևյալ պատկերը՝ ընդհանուր առմամբ, սիրիահայերի 1/4 մասն է (25.3%) նախընտրում այցելությունները Հայաստանում բնակվող իրենց/զուգընկերների ծնողներին, ազգականներին, հարևաններին և ընկերներին, որի մեջ, ընդհակառակը, ավելի մեծ մաս կազմում են արական սեռի ներկայացուցիչները:

Աղյուսակ 1

Սիրիահայերի այցելությունները, նախընտրելի անձինք

Նախընտրելի անձինք	Սեռ		Ընդամենը
	Արական	Իգական	
Ամուսնու/կնոջ ծնողներ Սիրիայից եկած	0	2.1	2.1
Ամուսնու/կնոջ քույր, եղբայր Սիրիայից եկած	4.9	9.2	14.1
Ամուսնու /կնոջ հորեղբայր, մորեղբայր, հորաքույր, մորաքույր Սիրիայից եկած	2.8	5.7	8.5
Այլ ազգականներ Սիրիայից եկած	4.9	4.9	9.8
Սիրիայից եկած ընկերներ/ծանոթներ	14.8	14.1	28.9
Ընդամենը՝ ներհամայնքային	27.4	36	63.4
Ամուսնու/կնոջ ծնողներ ՀՀ-ում բնակվող	2.1	0.7	2.8
Տեղացի հարևաններ	0.7	2.1	2.8
Տեղացի ընկերներ/ծանոթներ	4.2	2.1	6.3
Տեղացի ազգականներ	5.6	5.7	11.3
Այլ	0.7	1.4	2.1
Ընդամենը՝ միջհամայնքային	13.3	12	25.3
Չեն այցելում ոչ մեկի	6.3	5	11.3
Ընդամենը	47	53	100.0

Հարցը համադրելով բնակավայրի ցուցանիշի հետ (մարզեր և Երևան)՝ ստացել ենք հետևյալ պատկերը. մարզերում բնակվող սիրիահայերի շրջանում (11.9%) գրեթե հավասար է շփման նախընտրությունը տեղի հայերի (մոտ 5%) և սեփական համայնքի ներկայացուցիչների (մոտ 6%) հետ: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ սիրիահայերի մեծ մասը մարզերում բնակվում է տեղի

ազգականների խորհրդով՝ ֆինանսական տեսանկյունից առավել ռացիոնալ տարբերակ ընտրելով (էժան բնակարաններ): Բացի սրանից, պատճառ են նաև Երևանում բնակվող սիրիահայ ազգականներին և ընկերներին այցելելու համար ֆինանսական միջոցների բացակայությունը և հեռավորությունը:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ հարցմանը մասնակցած սիրիահայերի 11.3%-ը Հայաստանում չի հյուրընկալվում ոչ մեկի՝ պայմանավորված մի քանի գործոններով, որոնց կանդրադառնանք ներքևում:

Բացի տունայցելություններից՝ սիրիահայերը ներհամայնքային շփման իրենց պահանջմունքը բավարարում են նաև այլ ձևերով՝ ըստ հարցազրույցների արդյունքների: Ներկայացնենք դրանք՝ ըստ ֆորմալության տարբեր աստիճանների՝ ընդհուպ շփման բացակայություն.

1. Սիրիայից տեղափոխված հարազատների հետ գրեթե ամենօրյա շփում՝ առանց առիթի և բացառապես բոլոր տոներին՝ Նոր Տարի, Սուրբ Ծնունդ, Զատիկ և այլն:

2. Սիրիահայ ընկերների, ծանոթների հետ սովորություն դարձած հանդիպումներ սովորություն դարձած վայրում՝ Երևանի Ազատության հրապարակում գտնվող "Մեղեդի" սրճարանում:

3. Ընկերների և մտերիմների հետ հանդիպումներ տանը, որը հնարավորություն է տալիս սիրիական խոհանոցը ճաշակելու հետ մեկտեղ խոսելու ընդհանուր ցավերի և անհանգստությունների մասին:

4. Երիտասարդների շրջանում սովորույթի ուժ ստացած տունայցելություններ ազգականներին տոնական օրերին:

5. Ծանոթ-անծանոթների հետ պատահական հանդիպումներ փողոցում՝ կարոտով և սրտացավությամբ լի երկկողմանի հարց ու պատասխաններով:

6. Սփյուռքի նախարարության կամ այլ կազմակերպությունների ձեռնարկած միջոցառումներում ու հավաքներում ծանոթների և ընկերների հետ հանդիպումներ:

7. Սիրիահայ ընտանիքներին վերաբերող տեղեկատվության տարածում մտերիմների և ծանոթների կողմից՝ պարզապես հեռախոսազանգերի միջոցով:

8. Ոչ հաճախակի հանդիպումներ՝ պայմանավորված բնակության վայրերի հեռավորությամբ, ֆինանսական միջոցների սղությամբ և այլն (այս մասին նշեցինք նաև վերևում՝ մարզերում բնակվողների դեպքում):

9. Մեկուսացում, օտարում՝ իրենց հարազատների՝ Հայաստանում չբնակվելու փաստով պայմանավորված:

Սիրիահայերի չշփվելու պրակտիկան կիրառվում է նաև տեղի հայերի, մասնավորապես, իրենց հարևանությամբ բնակվողների նկատմամբ՝ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ մի քանի պատճառներով՝

- *առօրյա հոգսերով ծանրաբեռնված օրեր, որոնք երկկողմանի են, և սահմանափակում են շփման հնարավորությունը.*
- *ժամանակի բացակայություն՝ աշխատանքային երկար և առանց հանգստյան օրերի պատճառով.*
- *տեղաբնակների կողմից անտարբերություն սիրիահայերի նկատմամբ.*
- *իրենց համեմատ՝ տեղի հայերի սոցիալական ցածր դիրք.*
- *սիրիահայերի մեջ հաղորդակցվելու ցանկության բացակայություն՝ նորին չձգտելու հստակ մտադրությամբ.* ***"Ես իմ կյանքիս վարժված եմ, ու ամեն մարդ***

ինքն իր կյանքին վարժված է: Ես չեմ փափագում ուրիշի բաներն իմ կյանքի մեջ վերցնել"[5].

- *հարևանների հետ շփվելու չձևավորված մշակույթ Երևանում ապրող հայերի շրջանում.*
- *ավանդույթների և սովորույթների տարբերություն, որը ևս իր մեկնաբանությունն ունի սիրիահայերի շրջանում.* ***"Այն հայաստանյան սովորույթները, որոնք մեզ համար խորթ են, չենք ընդունում: Օրինակ, մեզ համար հիմա մեծ պահք է, իրենց համար բան մը չի նշանակէ: Առօրյա կյանքի ու հասկացողության այս տարբերությունները կան, որոնք ընդունելի չեն: ...Այս ամենի չիմացությունը հայաստանցու հետ շատ հարազատորեն շփվելու խորթություն կուտա"[6]:***

Սակայն միջանձնային շփման այս դրսևորումներին զուգահեռ՝ ապագան Հայաստանի հետ կապող սիրիահայերի շրջանում նկատվում է մեծ պատրաստակամություն և տարբեր խմբերի հետ շփման փորձ, որը բացատրվում է դրա անհրաժեշտությամբ և կարևորությամբ: Դրա շնորհիվ նրանք հարստացնում են գիտելիքները հայկական միջավայրի մասին՝ ընդունելով և հանդուրժողական դիրքո-րոշում ձևավորելով անհատների և խմբերի նկատմամբ: Մասնավորապես, պետք է առանձնացնել հարևանների հետ շփումը՝ տոնական և ոչ տոնական օրերին փոխադարձ այցելություններով, որն ունի շատ գործառական նշանակություն սիրիահայերի, ինչու ոչ, նաև տեղի հայերի համար՝ 1) ծանոթացում ավանդույթներին, 2) ծանոթացում Հայաստանի տոնածիսական համակարգին, 3) ուտեստների պատրաստման փորձի փոխանակում, 4) արևելահայերեն սովորելու հնարավորությունների ստեղծում, 5) սոցիալական ինստիտուտների հետ առնչվելու պարագայում փաստաթղթերի և օրենքների իրազեկման հարցերում օգնություն, 6) ֆինանսական, նյութական օժանդակություն հարևանությամբ ապրող տանտերերի կողմից:

Գործընկերների և ընկերների հետ ամենօրյա շփումը ևս միջմշակութային հաղորդակցության յուրահատուկ տեսակ է, որը մեծ դեր ունի տեղի հայերի արժեքային համակարգին ծանոթանալու գործընթացում. ***"Շփվելով նրանց հետ՝ հասկանում եմ նրանց մտածելակերպը և հարմարվում եմ: Երկու տարբեր հայ ենք: Ինձ համար մենակ լեզուն է նույնը: Կարող է եվրոպական երկրում մի ազգ լինի, որ մեր սիրիական մտածելակերպին ավելի մոտ լինի: Այստեղ մեզ մենակ լեզուն ու հողն է կապում և ոչ՝ մարդը: Մեր արժեքները տարբեր են շատ"[7]:***

Սեփական շփման փորձի, սոցիալական ցանցի (բարեկամներ, հարազատներ, ծանոթներ) ազդեցության և տարածված կարծրատիպերի հիման վրա սիրիահայերը ձևավորել են ՀՀ-ում ապրող հայերի մասին իրենց պատկերացումները, որոնք ընդհանրացված են ստորև բերված աղյուսակում:

---

[5] **Հակոբյան Գ.,** *ԴԱՆ, Ե., 2014 թ., հարցազրույց հիսունհինգամյա սիրիահայ կնոջ հետ:*

[6] *Նույն տեղում, հարցազրույց հիսունվեցամյա սիրիահայ տղամարդու հետ:*

[7] *Նույն տեղում, հարցազրույց երեսուներկուամյա սիրիահայ տղամարդու հետ:*

Աղյուսակ 2

ՀՀ-ում ապրող հայերին բնորոշ հատկանիշ, դատողություն

Հատկանիշներ (+)	%	Հատկանիշներ (-)	%
Քաղաքավարի, բարեկիրթ	4.8	Անքաղաքավարի, կոպիտ, չոր	9.0
Ընկերասեր, մարդասեր, շփվող	7.2	Չշփվող, փակ	2.4
Քաղցրախոս, սիրալիր, բարեհամբույր, սրտաբաց, ջերմ	6.0	Կռվարար, "մուննաթ", դժգոհ, մեծամիտ	5.4
Ազգասեր, հայրենասեր, մշակույթը պահպանող	1.8	Ոչ ազգասեր, օտարամոլ, անտեսում են եկեղեցական տոները	4.2
Հարգալից, հանդուրժողական, յուրային են համարում	13.3	Երկրորդային, օտար են համարում, անտարբեր են	2.4
Ազնիվ, շիտակ, պարզ, բարի, խղճով	9.0	Խաբեբա, ստախոս, գող, անվստահելի, շահամոլ	6.6
Օգնելու պատրաստակամ	12.7	Օգնող չեն	1.2
Աշխատասեր	1.8	Ծույլ	0.6
Ընդամենը (+)	56.6	Ընդամենը (-)	31.8
Տխուր, տանջված 1.8			
Հյուրընկալ, հյուրասեր 6.0			
Գեղեցիկ 1.8			
Խելացի, կրթված 0.6			
Դժվարանում եմ պատասխանել 1.4			
Ընդամենը 100.0			

Աղյուսակ 2-ի տվյալներից նկատելի է, որ հանկանիշ համարվող հատկությունների մեջ բավական մեծ կշիռ են ստացել բացասական երանգ ունեցող հատկությունները, որոնցով սիրիահայերը բնութագրել են տեղի հայերին: Եթե փորձենք զուգահեռներ անցկացնել տեղի հայերի հետ չշփվելու՝ վերևում բերված պատճառների հետ, կնկատենք, որ դրանք հիմնականում համընկնում են: Ինչպես վերևում, այնպես էլ աղյուսակ 2-ի արդյունքներից տեսնում ենք, որ սիրիահայերը կարևորում են քրիստոնեական արժեքներն ու ավանդույթները, որոնք հայրենիքում էապես տարբերվում են օտար միջավայրում հայի ինքնությունը մարմնավորող և իրենց համար կարևորվող արժեքներից:

Ոչ պակաս շեշտադրմամբ և՛ քանակական (6.6%), և՛ որակական հարցազրույցների մեջ նշվում է նաև հայերի խաբեբա և անվստահելի լինելու մասին: ***"Չգիտեն քրիստոնեության միջուկը, չգիտեն, որ չպետք է իրենք մեղք գործեն՝ լինի փոքր ստախոսություն, լինի մեծ բան: Հայաստանում արդեն սովորական բան է***

խաբելը, ստելը: Եթե չես խաբում, չես ստում, ուրեմն դու մարդ չես: Բայց ճիշտը դա չէ"[8]:

Ինչպես նաև, ըստ սիրիահայերի, Հայաստանում ապրող հայը ավելի շուտ ոչ թե բարեկիրթ է, քաղաքավարի, այլ հակառակը՝ անքաղաքավարի, կոպիտ և չոր (բացասական հատկությունը երկու անգամից ավելի շատ կշիռ է ստացել դրականի համեմատ՝ համապատասխանաբար 9 և 4.8):

Թեպետ բացասական համարվող հատկանիշները քիչ չեն (մոտ 32%) և մեծավ մասամբ հիմնված են շփման փորձի վրա, այնուամենայնիվ, դրական հատկանիշները գերակշռող են ոչ միայն հականիշ զույգերում, այլև ընդհանուր առմամբ: Առավել մեծ տոկոս են կազմել տեղի հայերի հետևյալ դրական որակները՝ հանդուրժողականություն (13.3%), ընկերասիրություն ու շփվելու պատրաստակամություն (7.2%), ազնվություն ու բարություն (9%), մեծահոգություն և օգնելու պատրաստակամություն (12.7%): Սիրիահայերը գնահատել են նաև տեղի հայերի հյուրասիրությունն ու հյուրընկալությունը, գեղեցիկ և խելացի լինելը:

Ունենալով տեղի հայերի մասին իրենց պատկերացումները՝ սիրիահայերը սահմանել են նաև նրանցից սոցիալական հեռավորության աստիճանները՝ ըստ Է. Բոգարդուսի սանդղակի[9]:

Աղյուսակ 3-ի տվյալները վկայում են այն մասին, որ հարցմանը մասնակցած սիրիահայերի մեծ մասը՝ մոտ 60%-ը, պատրաստ է ամուսնական հարաբերություններ ձևավորել հայաստանցի հայերի հետ, որտեղ մեծ զանգված են կազմում արական սեռի ներկայացուցիչները:

Աղյուսակ 3

Սոցիալական հեռավորությունը ՀՀ հայից՝ ըստ սեռատարիքային չափանիշի

---

[8] *Նույն տեղում, հարցազրույց հիսնամյա սիրիահայ տղամարդու հետ:*

[9] *Է. Բոգարդուսի՝ սոցիալական դիստանցիաների սանդղակը (1-7 միավոր) ուղղված է խմբերի դիստանցիան հասկանալուն: Այդ սանդղակը ցույց է տալիս խմբերի միջև հոգեբանական մտերմության աստիճանը, որը նպաստում է նրանց հեշտ հաղորդակցմանը: Սոցիալական առավելագույն դիստանցիան՝ 7 թիվը, նշանակում է, որ հաղորդակցությունն այս դեպքում հիմնականում խորհրդանշական, ձևական բնույթ է կրում: Նվազագույնը՝ 1 թիվը, վկայում է այն մասին, որ երկու խմբերի ներկայացուցիչները միմյանց հետ հարաբերությունները կառուցում են՝ հաշվի առնելով և ընդունելով դիմացինի բնորոշ առանձնահատկությունները, յուրօրինակությունները:*

Սոցիալական հեռավորության աստիճանները	Սեռ		Տարիք			Ընդամենը
	Արական	Իգական	18-35	36-55	56<	
1. Զուգընկեր	42.4	17.4	17.4	25	17.4	59.8
2. Ընկեր	3.3	30.3	9.8	17.3	6.5	33.6
3. Հարևան	1.1	2.2	1.1	1.1	1.1	3.3
4. Գործընկեր	1.1	1.1	1.1	1.1	0	2.2
5. Նույն երկրի քաղաքացի	1.1	0	0	1.1	0	1.1
6. Զբոսաշրջիկ	0	0	0	0	0	0
7.Նախընտրում են չտեսնել նույն երկրում	0	0	0	0	0	0

Եվ պատահական չէ այս ցուցանիշը, քանզի դաշտային նյութերի հավաքման ամբողջ ընթացքում չենք հանդիպել ամուսնական կամ նախաամուսնական զույգերի, որում կինը լինի սիրիահայ, իսկ ամուսինը՝ Հայաստանում ծնված և մեծացած հայ: Ավելին, քանակական հետազոտության արդյունքները ևս ցույց են տալիս, որ ամուսնության նպատակով մինչ օրս Հայաստան այցելած սիրիահայերը 26-55, նաև 66-ից բարձր տարիք ունեցող տղամարդիկ են: Ինչպես տեսնում ենք, Հայաստանից "աղջիկ ուզելու" սովորությունը արդիական է եղել բոլոր ժամանակներում, որը շարունակվում է նաև այսօր: Իսկ իգական սեռի ներկայացուցիչներն առավելապես (30.3%՝ ի համեմատ 3.3%-ի) պատրաստ են ընկերական փոխհարաբերությունների մակարդակում շփվել տեղի հայերի հետ:

Այսպիսով, կարող ենք ասել, որ **գիտակցական** մակարդակում ապագան Հայաստանի հետ կապող սիրիահայերի մեջ նկատվում է շփման անհրաժեշտության և կարևորության գիտակցում: Նրանք տեղեկատվություն են հավաքում, հարստացնում իրենց գիտելիքները հայաստանյան միջավայրի մասին՝ ընդունելով և հանդուրժողական դիրքորոշում ձևավորելով անհատների և խմբերի նկատմամբ: Հայաստանը ժամանակավոր ապաստան համարող սիրիահայերի մեջ տեղի է ունենում հակառակը. նեղացնելով տեղեկատվության ստացման շրջանակը՝ նվազագույնի են հասցնում հայաստանցի հայերի հետ շփումն ու դրա կարևորությունը:

Զգացական մակարդակում, տեղի հայերին բնութագրելով բազմաթիվ դրական և բացասական հատկանիշներով, սիրիահայերն իրենց շփման շրջանակը սահմանափակում են ամուսնական և ընկերական հարաբերություններ ստեղծելու պատրաստակամությամբ: Չնայած ՀՀ հայերին բնորոշող դրական հատկանիշներն ավելի մեծ կշիռ են կազմում ընդհանուր հատկանիշների մեջ, այնուամե-

նայնիվ, բացասական հատկանիշները վերացական չեն, այլ մեծ մասամբ հիմնված են շփման փորձի վրա:

Վարքային *մակարդակում հայաստանցիների հետ շփման ձևերն ու հաճախականությունը տարբեր են՝ կախված արևելահայերենին տիրապետելու աստիճանից, աշխատանքային, ուսանողական և դպրոցական միջավայրի առկայությունից, ազատ ժամանակն ում հետ և որտեղ անցկացնելու նախընտրությունից, հյուրընկալվելու և հյուրընկալելու սոցիալական ցանցը շրջանակելուց և այլն:*

ОСОБЕННОСТИ КОММУНИКАЦИИ СИРИЙСКИХ АРМЯН В РА

АКОПЯН Г. Л.

Резюме

Сирийские армяне, оказавшись в иной культурной среде, в частности, в РА, наряду со многими другими проблемами также сталкиваются с трудностями в установлении контактов с местным населением. Жизнедеятельность и отношения сирийских армян определяются их культурными нормами, формирующими их межлич-ностные отношения и социальные оценки.

COMMUNICATION PECULIARITIES OF SYRIAN ARMENIANS IN THE RA

G. HAKOBYAN

Abstract

Syrian Armenians appearing in a different cultural environment in the RA, also in line with many other problems face the difficulty in contacting (relations, communication) with the Armenians of the RA. The vital activities and relationships of Syrian Armenians are defined by their cultural norms, which regulating all spheres of their thinking, emotions and behavior, affect interpersonal relations, the nature of assessment and perceptions.